Հավելված
Հաստատվել է ՀՀ ՀՊ-ի
2019թ. մայիսի 24-ի թիվ 12/1 որոշմամբ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏ

Ե Զ Ր Ա Կ Ա Ց Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

2019

Հայաստանի Հանրապետության 2018 թվականի պետական բյուջեի կատարման վերաբերյալ Հայաստանի Հանրապետության հաշվեքննիչ պալատի եզրակացությունը ներկայացվում է ի կատարումն ՀՀ Սահմանադրության 111-րդ հոդվածի, «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 4-րդ մասի 1-ին կետի բ) ենթակետի, 27-րդ հոդվածի 3-րդ մասի, «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ Սահմանադրական օրենքի 116-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջների: Սույն եզրակացությունը կազմվել է ՀՀ ֆինանսների նախարարությունում՝ 2018 թվականի պետական բյուջեի կատարման կազմակերպման գործընթացի հաշվեքննության ընթացիկ եզրակացության հիման վրա:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՍ 1. Անհամապատասխանությունների, խեղաթյուրումների, ինչպես նաև առաջարկությունների վերաբերյալ տեղեկատվություն.....4

1. ՀՀ 2018 թվականի պետական բյուջեի կատարման մասին ՀՀ կառավարության հաշվետվության վերաբերյալ.....4

1.1. 2018 թվականի պետական բյուջեի եկամուտների վերաբերյալ.....7
1.2. 2018 թվականի պետական բյուջեի ծախսերի վերաբերյալ.....9
1.3. 2018 թվականի պետական բյուջեի դեֆիցիտի վերաբերյալ.....15
1.4. 2018 թվականի ՀՀ պետական պարտքը.....17
1.4.1. 2018 թվականի ՀՀ ներքին պետական պարտքը.....18
1.4.2. 2018 թվականի ՀՀ արտաքին պետական պարտքը.....18
1.4.3. ՀՀ արտաքին պետական պարտքի բեռը բնութագրող մակրոտնտեսական ցուցանիշները.....20

2. ՀՀ 2018 թվականի պետական բյուջեի կատարմանն առնչվող օրենսդրության վերաբերյալ.....22

3. 2018 թվականի ՀՀ պետական բյուջեով սահմանված ծրագրերի իրականացումը բնութագրող ոչ ֆինանսական ցուցանիշների կատարման վերաբերյալ.....24

4. Հետհսկողական գործընթաց (Follow-up).....27

5. Առաջարկություններ.....28

ՄԱՍ 2. Պետական բյուջեի կատարման վերաբերյալ կարծիք.....30

ՄԱՍ 1. ԱՆՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ԽԵՂԱԹՅՈՒՐՈՒՄՆԵՐԻ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

1. ՀՀ 2018 թվականի պետական բյուջեի կատարման մասին ՀՀ կառավարության հաշվետվության վերաբերյալ

հազ. դր.

Ծրագիր	Ճշտված ծրագիր	Փաստացի
Եկամուտներ 1,308,284,867.7	**Եկամուտներ** 1,365,332,345.7	**Եկամուտներ** 1,341,690,590.9
Ծախսեր 1,465,200,573.2	**Ծախսեր** 1,527,268,062.1	**Ծախսեր** 1,447,083,011.5
Դեֆիցիտ 156,915,705.5	**Դեֆիցիտ** 161,935,716.4	**Դեֆիցիտ** 105,392,420.6

ՀՀ 2018 թվականի պետական բյուջեի կատարման վերաբերյալ ՀՀ կառավարության հաշվետվության համաձայն (այսուհետ՝ Հաշվետվություն), ՀՀ 2018 թվականի պետական բյուջեի եկամուտները «ՀՀ 2018 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքով (այսուհետ՝ Օրենք) նախատեսվել են 1,308,284,867.7 հազ. դրամ: 2018 թվականի ընթացքում պետական բյուջեի եկամուտները ՀՀ կառավարության որոշումներով ավելացել են 57,047,478.0 հազ. դրամով, ինչի արդյունքում ՀՀ 2018 թվականի պետական բյուջեի եկամուտների ճշտված ծրագիրը կազմել է 1,365,332,345.7 հազ. դրամ:

Օրենքի 9-րդ հոդվածի 10-րդ կետի համաձայն, պետության դրամական միջոցների համախմբված հաշվառման նպատակով պետական բյուջեի ծրագրային և փաստացի ցուցանիշներում ներառվել են նաև ՀՀ պետական հիմնարկների համար բացված արտաբյուջետային հաշիվների շրջանառությունը: 2018 թվականի

պետական հիմնարկների արտաբյուջետային միջոցների հաշիվներին մուտքերը ճշտված ծրագրով նախատեսվել են 44,294,148.7 հազ. դրամ, որից՝ 40,873,181.4 հազ. դրամը դիտարկվող ժամանակահատվածում ստացված եկամուտներն են, 3,396,118.2 հազ. դրամը՝ արտաբյուջետային հաշիվների ելքերի ֆինանսավորմանը ուղղվող հաշվի տարեսկզբի միջոցները, իսկ ոչ ֆինանսական ակտիվների օտարումից մուտքերը նախատեսվել են 24,849.1 հազ. դրամ: Հաշվետվությամբ արտաբյուջետային միջոցների հաշիվներին փաստացի մուտքը կազմել է 39,050,761.74 հազ. դրամ, որից՝ 37,407,425.0 հազ. դրամը դիտարկվող ժամանակահատվածում փաստացի ստացված եկամուտներն են, 1,618,439.7 հազ. դրամը՝ արտաբյուջետային հաշիվների ելքերի ֆինանսավորմանն ուղղվող հաշվի տարեսկզբի միջոցները, իսկ 24,897.0 հազ. դրամը՝ ոչ ֆինանսական ակտիվների իրացումից եկամուտները:



2018 թվականի պետական բյուջեի ընդհանուր եկամուտները ՀՆԱ-ի նկատմամբ կազմել են 22.4% (2017 թվականին՝ 22.2%):

Օրենքով ՀՀ 2018 թվականի պետական բյուջեի ընդամենը ծախսերը նախատեսվել են 1,465,200,573.2 հազ. դրամ, որոնք 2018 թվականի ընթացքում ՀՀ կառավարության որոշումներով ավելացել են 62,067,488.9 հազ. դրամով: Արդյունքում ծախսերի ճշտված ծրագիրը կազմել է 1,527,268,062.1 հազ. դրամ, որը ներառում է 43,788,469.9 հազ. դրամ արտաբյուջետային միջոցների հաշվին նախատեսված ծախսը: Ծախսերի ճշտված ծրագիրը, առանց արտաբյուջետային

միջոցների հաշվին նախատեսված ծախսի, կազմել է 1,483,479,592.2 հազ. դրամ: Ընդամենը փաստացի ծախսերը, ներառյալ 34,053,287.9 հազ. դրամ փաստացի արտաբյուջետային ծախսերը, կազմել են 1,447,083,011.5 հազ. դրամ կամ Օրենքով նախատեսված ցուցանիշի 98.8%-ը, իսկ ճշտված ծրագրի 94.7%-ը: 2018 թվականի պետական բյուջեի փաստացի ծախսեր/ՀՆԱ հարաբերակցությունը կազմել է 24.1%՝ 2017 թվականի 27.0%-ի համեմատ:

Օրենքով ՀՀ 2018 թվականի պետական բյուջեի դեֆիցիտը հաստատվել է 156,915,705.5 հազ. դրամ: ՀՀ 2018 թվականի պետական բյուջեի նախատեսված դեֆիցիտը տարվա ընթացքում ճշտված ծրագրով ավելացել է 5,020,010.9 հազ. դրամով՝ կազմելով 161,935,716.4 հազ. դրամ: ՀՀ 2018 թվականի պետական բյուջեի կատարման արդյունքում գրանցվել է 105,392,420.6 հազ. դրամի դեֆիցիտը, որն Օրենքով նախատեսվածի 67.2%-ն է, իսկ տարեկան ճշտված ծրագրով նախատեսվածի՝ 65.1%-ը: 2018 թվականին դեֆիցիտը/ՀՆԱ հարաբերակցությունը կազմել է 1.8%՝ 2017 թվականի 4.8%-ի համեմատ:



1.1 2018 թվականի պետական բյուջեի եկամուտների վերաբերյալ

2018թ. պետական բյուջեի եկամուտների կատարումը (հազ. դրամ)



2018 թվականի պետական բյուջեի մասին ՀՀ օրենքով եկամուտները կազմել են 1,308,284,867.7 հազ. դրամ, որն ավել է նախորդ տարվա նույն ցուցանիշից 98,272,525.7 հազ. դրամով, իսկ 2018 թվականի եկամուտների ճշտված ծրագրի ցուցանիշը՝ 1,365,332,345.7 հազ. դրամ, որն ավել է նախորդ տարվա նույն ցուցանիշից 44,473,903.0 հազ. դրամով, ներառյալ՝ արտաբյուջետային, ներառյալ՝ արտաբյուջետային եկամուտները):

2018 թվականի պետական բյուջեի փաստացի եկամուտները կազմել են 1,341,690,590.9 հազ. դրամ, որն ավել է 2017 թվականի փաստացի եկամուտներից 103,909,823.5 հազ. դրամով կամ 8.4%-ով (ներառյալ՝ արտաբյուջետային եկամուտները):

2018 թվականի պետական բյուջեի փաստացի եկամուտների կառուցվածքում ՀՀ 2018 թվականի պետական բյուջեի փաստացի հարկային եկամուտները (ներառյալ՝ արտաբյուջետային եկամուտները) տարեկան ճշտված ծրագրով նախատեսված 1,226,552,132.8 հազ. դրամից պակաս է հավաքագրվել 6,292,769.9 հազ. դրամով, կամ 0.5%-ով, որի արդյունքում փաստացի հարկային եկամուտները կազմել են 1,220,259,362.9 հազ. դրամ՝ ապահովելով տարեկան ճշտված ծրագրի 99.5% կատարում: 2018 թվականի պետական բյուջեի փաստացի հարկային եկամուտները ՀՆԱ-ի նկատմամբ կազմել են 20.3%, 2017 թվականի՝ 20.1%-ի համեմատ:

ՀՀ 2018 թվականի պետական բյուջեի տարեկան ծրագրով պետական տուրքերը նախատեսվել են 35,007,670.0 հազ. դրամ, իսկ փաստացի պետական տուրքերից մուտքերը կազմել են 37,861,815.5 հազ. դրամ, ճշտված ծրագրի 35,499,588.3 հազ. դրամի դիմաց՝ ապահովելով տարեկան ճշտված ծրագրի 106.7% կատարում:

2018 թվականի պետական բյուջեի պաշտոնական դրամաշնորհները Օրենքով նախատեսվել են 35,823,846.8 հազ. դրամ, ճշտված ծրագրով՝ 38,563,264.0 հազ. դրամ, իսկ փաստացի ցուցանիշն իրականացվել է 11,239,984.4 հազ. դրամով, որը կազմել է ճշտված ծրագրի 29.1%-ը: Առանց արտաբյուջետային պաշտոնական դրամաշնորհների, փաստացի պաշտոնական դրամաշնորհները կազմել են 10,957,661.5 հազ. դրամ, որը ճշտված ծրագրի նկատմամբ կազմում է 28.7%:

2018 թվականի պետական բյուջեի այլ եկամուտները Օրենքով նախատեսվել են 23,961,020.9 հազ. դրամ, ճշտված ծրագրով՝ 64,717,360.6 հազ. դրամ, իսկ փաստացի ցուցանիշը կազմել է 72,329,428.1 հազ. դրամ, որը կազմել է ճշտված ծրագրի 111.8%-ը: Առանց արտաբյուջետային այլ եկամուտների, փաստացի այլ եկամուտները կազմել են 37,168,184.5 հազ. դրամ, որն առանց արտաբյուջետային այլ եկամուտների ճշտված ծրագրի նկատմամբ կազմում է 143.7%:

2018թ. բանկերում և այլ ֆինանսավարկային հաստատություններում բյուջեի ժամանակավոր ազատ միջոցների տեղաբաշխումից և դեպոզիտներից ստացվել են շուրջ 7,645,056.5 հազ. դրամ տոկոսավճարներ (2017թ.՝ 6,098,523.3 հազ. դրամ): 2017թ. համեմատ նշված եկամուտներն աճել են 25.4%-ով կամ 1,546,533.2 հազ. դրամով:

1.2. 2018 թվականի պետական բյուջեի ծախսերի վերաբերյալ

Ըստ Հաշվետվության, ընդամենը փաստացի ծախսերը, ներառյալ՝ 34,053,287.9 հազ. դրամ փաստացի արտաբյուջետային ծախսերը, կազմել են 1,447,083,011.5 հազ. դրամ՝ ապահովելով ճշտված ծրագրի 94.7% կատարողական:

2018թ. ընթացքում կատարված ծախսերի կառուցվածքն ըստ բաժինների



ՀՀ 2018 թվականի պետական բյուջեի ծրագրերի թվաքանակը 715-ն է:

ՀՀ 2018 թվականի պետական բյուջեի ծրագրերի (գործառական դասակարգմամբ) կատարման ուսումնասիրությամբ պարզվել է՝

28 ԾՐԱԳՐԵՐ

Չեն կատարվել, այսինքն՝ վճարումներ չեն իրականացվել

(Ճշտված ծրագրով նախատեսված ընդհանուր գումարը՝ 15,269,972.0 հազ. դրամ)

11 ԾՐԱԳՐԵՐ

Ճշտված ծրագրով զրոյացվել են

(Օրենքով նախատեսված ընդհանուր գումարը՝ 2,024,637.1 հազ. դրամ)

3 ԾՐԱԳՐԵՐ

Գերակատարվել են

(Ծախսային ծրագրերով փաստացի ծախսերը կազմել են 2,022,823.6 հազ. դրամ. ճշտված ծրագրից ավելի ծախս է կատարվել՝ 522,141.9 հազ. դրամի չափով)

54 ԾՐԱԳՐԵՐ

Փաստացի կատարողականը ճշտված ծրագրի նկատմամբ < 50%
(ներառված չեն չկատարված ծրագրերը)

(Այդ ծրագրերի ճշտված ծրագրային ցուցանիշը կազմել է 21,513,813.3 հազ. դրամ, մինչդեռ, փաստացի կատարողականը՝ 5,641,379.2 հազ. դրամ կամ ճշտված ծրագրի 26.2%-ը: 54 ծրագրերից 26-ը արտաքին վարկային և դրամաշնորհային ծրագրեր են: Փաստացի ցուցանիշի ամենամեծ շեղումը ճշտված ծրագրի նկատմամբ գումարային արտահայտությամբ արձանագրվել է ՌԴ աջակցությամբ իրականացվող «Հայկական ԱԷԿ-ի N 2 էներգաբլոկի շահագործման նախագծային ժամկետի երկարացման դրամաշնորհային ծրագիր» ծրագրի գծով՝ 4,097,491.4 հազ. դրամ)

14 ԾՐԱԳՐԵՐ

Օրենքով նախատեսված չեն եղել (բացի արտաբյուջետային ծրագրերից), սակայն ճշտված ծրագրով նախատեսվել են

(Ճշտված ծրագրով նախատեսվել է 11,115,680.0 հազ. դրամ, իսկ փաստացի կատարվել է 8,720,718.3 հազ. դրամ: 14 ծրագրերից 8-ը դրամաշնորհային ծրագրեր են, որոնց փաստացի ծախսը կազմել է 1,455,253.8 հազ. դրամ, 2-ը՝ օտարերկրյա պետությունների և միջազգային կազմակերպությունների միջոցների հաշվին ֆինանսավորվող վարկային ծրագրեր, որոնց փաստացի ծախսը կազմել է 60,474.0 հազ. դրամ, իսկ 4-ը՝ բյուջետային ծրագրեր, որոնց փաստացի ծախսը կազմել է 7,204,990.5 հազ. դրամ)

Արտաբյուջետային ծրագրերի փաստացի դրամարկղային ծախսը կազմել է ընդամենը ՀՀ պետական բյուջեի ծախսերի 2. 4%-ը

2018 թվականի ընթացքում արտաբյուջետային ծրագրերի փաստացի դրամարկղային ծախսը կազմել է 34,053,287.9 հազ. դրամ, որը 9,735,182.0 հազ. դրամով պակաս է նախատեսված ցուցանիշից: Արտաբյուջետային ծախսերի կառուցվածքում ամենամեծ տեսակարար կշիռն ունի «ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանության ճանապարհային ոստիկանության կողմից արձանագրված խախտումների համար վարչական տուգանքների գանձումներից, գրանցման-քննական ծառայությունների դիմաց վճարումներ և այլ վճարովի ծառայություններ» ծրագիրը՝ 34.1% կամ 11,602,745.3 հազ. դրամ: 2018 թվականի ընթացքում արտաբյուջետային ծրագրերի ամենափոքր կատարողականը՝ «Սպառազինության և ռազմական տեխնիկայի ձեռքբերում, ինչպես նաև ՀՀ պաշտպանության նախարարության համակարգի անձնակազմի նյութական խրախուսում» ծրագրով կազմել է 13.9%:

ՀՀ 2018 թվականի պետական բյուջեի փաստացի ծախսերի (գործառական դասակարգմամբ) ճշտված ծրագրի նկատմամբ կատարողականը տասնմեկ բաժիններում նախատեսվածից ցածր է, ընդ որում, ամենացածր կատարողականը արձանագրվել է «Բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայություններ» բաժնում՝ 46.9%:

2018թ. ՀՀ կառավարության պահուստային ֆոնդից փաստացի հատկացվել է 34 մլրդ. դրամ

2018 թվականին ՀՀ կառավարության պահուստային ֆոնդից Օրենքով նախատեսվել է հատկացնել 25,074,440.0 հազ. դրամ: Տարվա ընթացքում այդ ցուցանիշն ավելացել է 12,045,078.7 հազ. դրամով, և ճշտված ծրագիրը կազմել է 37,119,518.7 հազ. դրամ: 2018 թվականին ՀՀ կառավարության պահուստային ֆոնդից փաստացի հատկացվել է 34,310,029.0 հազ. դրամ: 2018 թվականին ՀՀ կառավարության պահուստային ֆոնդի միջոցների 38.3%-ն ուղղվել է դրամաշնորհներին:

ՀՀ 2018 թվականի պետական բյուջեի (տնտեսագիտական դասակարգմամբ) փաստացի ծախսերի կառուցվածքը, ներառյալ արտաբյուջետային հաշիվների միջոցների տնօրինման արդյունքում կատարված ծախսերը, հետևյալն է. 89.8%-ը ընթացիկ ծախսեր, իսկ 10.2%-ը՝ ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնություններ:

ՀՀ 2018թ. պետական բյուջեի փաստացի ծախսերի կառուցվածքը (տնտեսագիտական դասակարգմամբ)



2017 թվականի համեմատ, 2018 թվականին ՀՀ պետական բյուջեի ծախսերը նվազել են 3.8%-ով: Ընդ որում, ընթացիկ ծախսերը աճել են 2.5%-ով, ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնությունները նվազել են 37.6%-ով:

ՀՀ 2018Թ. ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ (ԳԵՐԱՏԵՍՉԱԿԱՆ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՄԲ) ԾԱԽՍԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԻՑ ՊԱՐԶՎԵԼ Է, ՈՐ ԸՆԴԱՄԵՆԸ ՓԱՍՏԱՑԻ ԾԱԽՍԵՐԻՑ 65.0%-Ը ԲԱԺԻՆ Է ԸՆԿՆՈՒՄ 5 ԳԵՐԱՏԵՍՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

ՀՀ 2018 թվականին պետական բյուջեի փաստացի ընդամենը ծախսերի 23.6%-ը բաժին է ընկնում ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության սոցիալական ապահովության պետական ծառայությանը: ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության սոցիալական ապահովության պետական ծառայությանը Օրենքով նախատեսվել է հատկացնել 339,278,896.3 հազ. դրամ, ճշտված ծրագրով՝ 346,420,229.1 հազ. դրամ և փաստացի ծախսը կատարվել է 341,876,139.3 հազ. դրամի չափով կամ ճշտված ցուցանիշի շուրջ 98.7%-ով:

2018 թվականին ՀՀ պաշտպանության նախարարության ծախսը կազմել է պետական բյուջեի ամբողջ փաստացի ծախսերի 16.6%-ը, որն Օրենքով նախատեսվել է 245,173,625.4 հազ. դրամ, ճշտված ծրագրով՝ 250,582,552.9 հազ. դրամ: ՀՀ պաշտպանության նախարարության փաստացի ծախսերը կազմում են 240,878,490.3 հազ. դրամ կամ ճշտված ծրագրի 96.1%-ը:

2018 թվականին փաստացի ընդամենը ծախսերի մեջ երրորդ ամենամեծ տեսակարար կշիռը բաժին է ընկնում ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ 13.7% կամ 197,775,183.5 հազ. դրամ, որն Օրենքով նախատեսվել է 204,948,691.0 հազ. դրամ, իսկ ճշտված ծրագրի նկատմամբ կատարվել է 97.3%-ով:

2018 թվականին ՀՀ պետական բյուջեի փաստացի ծախսերի 5.6%-ը ՀՀ պետական եկամուտների կոմիտեի բաժինն է: Այդ գերատեսչությանը Օրենքով նախատեսվել է հատկացնել 60,611,025.2 հազ. դրամ, ճշտված ծրագրով՝ 82,319,189.5 հազ. դրամ, իսկ փաստացի ծախսերը կատարվել են 80,393,539.4 հազ. դրամի չափով, կամ ճշտված ցուցանիշի շուրջ 97.7%-ը:

2018 թվականին փաստացի ընդամենը ծախսերի 5.5%-ը, կամ 79,881,801,2 հազ. դրամը բաժին է ընկել ՀՀ առողջապահության նախարարությանը, որի կատարողականը ճշտված ծրագրի նկատմամբ կազմել է 96.1%:

Արտաբյուջետային միջոցների հաշվին կատարված ընդամենը փաստացի ծախսերի 86.7%-ը բաժին է ընկնում 3 գերատեսչությունների

2018 թվականին ՀՀ կառավարության ընդունած որոշումների համաձայն, պետական հիմնարկների համար բացված արտաբյուջետային հաշիվների միջոցների շրջանառության փաստացի ամենամեծ ծախս կատարել են երեք գերատեսչություններ, որոնց ընդհանուր գումարը կազմել է արտաբյուջետային ընդամենը ծախսերի 86.7%-ը: Դրանք են՝

1. ՀՀ ոստիկանությունը՝ 57.3%,
2. ՀՀ պետական եկամուտների կոմիտեն՝ 16.5%,
3. ՀՀ քաղաքաշինության կոմիտեն՝ 12.9%:

Հաշվետվության տեքստում բացակայում է ՀՀ 2018 թվականի պետական բյուջեի ծախսերի վերլուծությունը գերատեսչական դասակարգմամբ: Առանձին գերատեսչությունների ծրագրերի կատարման անդրադարձ է կատարվել ՀՀ 2018 թվականին պետական բյուջեի գործառնական դասակարգմամբ ծախսերի վերլուծության բաժնում:

2018 թվականի բյուջետային տարում կնքված պայմանագրերով պետական կարիքների համար նախատեսվել է իրականացնել 451,275,541.4 հազ. դրամի գնումներ, առանց արտաքին վարկերի և դրամաշնորհների ծրագրերի, սակայն փաստացի վճարվել է 436,296,889.8 հազ. դրամ: Այս ցուցանիշում ներառված են նաև գնում չհանդիսացող պայմանագրեր:

Հաշվեքննիչ պալատին ներկայացված ՀՀ 2018թ. պետական բյուջեի կատարման փաթեթում բացակայում է Օրենքի N 6 հավելվածի Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի (այսուհետ ԿԲ) 2018 թվականի 7,294,728.5 հազ. դրամ վարչական ծախսերի կատարման մասին տեղեկատվությունը, ինչը Հաշվեքննիչ պալատին հնարավորություն չի տալիս գնահատել հաշվետու բյուջետային տարվա պետական բյուջեի մասին Օրենքի 12-րդ հոդվածի պահանջների կատարումը:

1.3. 2018 թվականի պետական բյուջեի դեֆիցիտի վերաբերյալ

2018 թվականի պետական բյուջեի դեֆիցիտի փաստացի ֆինանսավորումը կազմել է 105,392,420.6 հազ. դրամ: 2017 թվականի համեմատ, 2018 թվականին դեֆիցիտի մեծությունը նվազել է 60.5 տոկոսային կետով: 2017 թվականի համեմատ, 2018 թվականին դեֆիցիտի ֆինանսավորման ներքին աղբյուրները նվազել են 1.7%-ով, իսկ արտաքին աղբյուրները՝ 81.7%-ով:

2017 թվականին պետական բյուջեի դեֆիցիտը Օրենքով նախատեսվել է ֆինանսավորել 156,915,705.5 հազ. դրամով: Տարվա ընթացքում դեֆիցիտի ֆինանսավորման մեծությունն աճել է և ճշտված ծրագիրը կազմել է 161,935,716.4 հազ. դրամ: Կատարողականը Օրենքով հաստատված ցուցանիշի նկատմամբ կազմել է 67.2%, իսկ ճշտված ծրագրի նկատմամբ՝ 65.1%:

հազ. դրամ

	Պլան	Ճշտված պլան	Փաստացի	Կատարման %-ը պլանի նկատմամբ	Կատարման %-ը ճշտված պլանի նկատմամբ
ԸՆԴԱՄԵՆԸ Դեֆիցիտ	156,915,705.5	161,935,716.4	105,392,420.6	67.2%	65.1%
այդ թվում՝					
Ներքին աղբյուրներ	76,985,409.8	80,353,171.0	69,363,991.5	90.1%	86.3%
Արտաքին աղբյուրներ	79,930,295.7	81,582,545.4	36,028,429.1	45.1%	44.2%

2018 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԱԶԱՏ ՄՆԱՑՈՐԴԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ԿԱԶՄԵԼ Է -21,290.99 ՄԼՆ ԴՐԱՄ, ԱՅԴ ԹՎՈՒՄ՝
6,841.9 մլն դրամ՝ գանձապետական միասնական հաշվի մնացորդի փոփոխություն, որից՝
25,756.1 մլն դրամ՝ Կենտրոնական գանձապետարանում դեպոզիտի փոփոխություն,
8,724.3 մլն դրամ՝ տեղական բյուջեի փոփոխություն,

2,407.6 մլն դրամ՝ արտաբյուջեի փոփոխություն,
13,353.4 մլն դրամ՝ ՊՈԱԿ-ների միջոցների փոփոխություն,
-3,407.7 մլն դրամ՝ ԾԻԳ-ի միջոցների փոփոխություն,
-39,991.8 մլն դրամ՝ պետական բյուջեի միջոցների փոփոխություն,
20,000.0 մլն դրամ՝ ԿԲ-ում ժամկետային ավանդների փոփոխություն,
-19,991.8 մլն դրամ՝ պետական ընդհանուր ռեսուրսների (ներառյալ՝ ժամկետային ավանդներ ԿԲ-ում) փոփոխություն, այդ թվում՝ 2,648.1 մլն դրամ՝ միջանկյալ հաշվի փոփոխություն,
-1,614.1 մլն դրամ՝ հաշվետու ժամանակաշրջանում տարեսկզբի ազատ մնացորդի մուտք,
2,425.1 մլն դրամ՝ ֆինանսավորման և դրամարկղային ծախսերի տարբերություն,
538.0 մլն դրամ՝ Կադաստրի եկամուտների և դրամարկղային ծախսի տարբերություն:

2018 թվականի տարեվերջի պետական ընդհանուր ռեսուրսները, ներառյալ ժամկետային ավանդները ԿԲ-ում կազմել են 20,838.9 մլն դրամ, իսկ 2017 թվականին դրանք 40,830.8 մլն դրամ էին:

Հարկ է նշել, որ ինչպես ՀՀ պետական բյուջեի կատարման մասին ՀՀ կառավարության հաշվետվության մեջ ներառված չէ գանձապետական միասնական հաշվի մնացորդների վերաբերյալ տեղեկատվություն:

ԱՐՏԱՔԻՆ ՎԱՐԿԵՐ

2018 թվականին Օրենքով նախատեսվել է միջազգային կազմակերպությունների, օտարերկրյա պետությունների և առևտրային բանկերի կողմից ստանալ 201,094,591.9 հազ. դրամ արտաքին վարկ, սակայն տարվա ընթացքում այդ ցուցանիշը փոփոխվել է, և տարեկան ճշտված ծրագիրը կազմել է 201,544,273.8 հազ. դրամ: 2018 թվականին արտաքին վարկերի և փոխատվությունների ստացումը փաստացի կազմել է 154,534,843.9 հազ. դրամ կամ ճշտված ծրագրի 76.7%-ը:

2018 թվականին Օրենքով արտաքին վարկերի մասով նախատեսվել է մարել 69,560,640.0 հազ. դրամ և փաստացի մարվել է 69,216,434.7 հազ. դրամ: Կատարողականը ճշտված ծրագրի նկատմամբ կազմել է 99.5%:

Նախկինում ՀՀ վերահսկիչ պալատի կողմից բազմիցս արձանագրվել էր, որ միջազգային համաձայնագրերի շրջանակներում Հայաստանի Հանրապետությանը տրամադրված բոլոր բյուջետային միջոցների շրջանառումը գանձապետական միասնական հաշվով չէր կատարվում: 2015 թվականին արդեն բոլոր ԾԻԳ-երի հաշիվները գտնվել են գանձապետական միասնական հաշվում: 2018 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ ԾԻԳ-երի հաշիվների մնացորդը կազմել է 29,305.0 մլն դրամ:

1.4. 2018 թվականի ՀՀ պետական պարտքը

2018 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ պետական պարտքը կազմել է 3,349.0 մլրդ դրամ (6,922.9 մլն ԱՄՆ դոլար), որից՝ ՀՀ արտաքին պետական պարտքը կազմել է 2,676.5 մլրդ դրամ (5,532.9 մլն ԱՄՆ դոլար), իսկ ՀՀ ներքին պետական պարտքը կազմել է 672.4 մլրդ դրամ (1,390.0 մլն ԱՄՆ դոլար):

2017 թվականի համեմատ, 2018 թվականին ՀՀ պետական պարտքը աճել է 2.1 տոկոսով, մասնավորապես՝ ՀՀ արտաքին պետական պարտքը՝ 0.6%, ՀՀ ներքին պետական պարտքը՝ 8.5%: 2018 թվականին ՀՀ պետական պարտքը կազմում է ՀՆԱ-ի 55.8%-ը: ՀՀ արտաքին պետական պարտքը ՀՆԱ-ի 44.6%-ն է, իսկ ՀՀ ներքին պետական պարտքը՝ 11.2%-ը:

1.4.1 2018 թվականի ՀՀ ներքին պետական պարտքը

31.12.2018թ. դրությամբ ներքին պետական պարտքի կառուցվածքը հետևյալն է՝



Նախորդ տարվա համեմատ ներքին պետական պարտքի սպասարկման ծախսը նվազել է 13.5 մլրդ. դրամով կամ 6.9%-ով

2018 թվականին ներքին պետական պարտքի սպասարկման փաստացի ծախսը կազմել է 182.2 մլրդ դրամ, որից 64.0 մլրդ դրամը տոկոսավճարներն են, իսկ 118.2 մլրդ դրամը՝ մարումը, ընդ որում, 2018 թվականի ներքին պետական պարտքի տոկոսավճարները միայն պետական գանձապետական պարտատոմսերի գծով վճարված տոկոսավճարներն են:

1.4.2. 2018 թվականի ՀՀ արտաքին պետական պարտքը

2018թ. ՀՀ արտաքին պարտքը 2017թ. համեմատ աճել է 38 մլն ԱՄՆ դոլարով

2018 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ արտաքին պետական պարտքը կազմել է 5,532.9 մլն ԱՄՆ դոլար, որից՝ 4,982.8 մլն ԱՄՆ դոլարը ՀՀ կառավարության արտաքին

պարտավորությունն է, իսկ 550.0 մլն ԱՄՆ դոլարը ՀՀ կենտրոնական բանկի (այսուհետ՝ ԿԲ)՝ պարտավորությունը:

Արտաքին պարտքի կառուցվածքը հետևյալն է՝

1. Կառավարության արտաքին վարկեր և փոխառություններ՝ 4,140.0 մլն ԱՄՆ դոլար,
2. Կառավարության կողմից տեղաբաշխված արտարժույթով պետական պարտատոմսեր (ոչ ռեզիդենտների կողմից ձեռքբերված)՝ 827.3 մլն ԱՄՆ դոլար,
3. Կառավարության կողմից տեղաբաշխված պետական գանձապետական պարտատոմսեր (ոչ ռեզիդենտների կողմից ձեռքբերված)՝ 7.5 մլն ԱՄՆ դոլար,
4. Կառավարության կողմից տեղաբաշխված արտաքին երաշխիքներ՝ 8.0 մլն ԱՄՆ դոլար,
5. Կենտրոնական բանկի արտաքին վարկեր և փոխառություններ՝ 550.0 մլն ԱՄՆ դոլար:

Կառավարության արտաքին վարկերի գծով կատարված մասհանումներից.

- 52.2%-ը կամ 167.0 մլն ԱՄՆ դոլարը միջազգային կազմակերպություն–ների գծով մասհանումներն են, որոնցում գերակշռում են թվով 3 կազմակերպութ–յունների՝ Ասիական զարգացման բանկի՝ 90.9 մլն ԱՄՆ դոլար (167.0 մլն ԱՄՆ դոլարի 54.5%-ը), Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի՝ 52.1 մլն ԱՄՆ դոլար (167.0 մլն ԱՄՆ դոլարի 31.2%) և Զարգացման միջազգային ընկերակցության՝ 11.0 մլն ԱՄՆ դոլար (167.0 մլն ԱՄՆ դոլարի 6.6%) կողմից տրամադրված վարկերի գծով ստացումները:
- 47.8%-ը կամ 152.7 մլն ԱՄՆ դոլարը օտարերկրյա պետությունների կող–մից տրամադրված վարկերի գծով կատարված մասհանումներն են, որոնցից 81.3 մլն ԱՄՆ դոլարը կամ 152.7 մլն ԱՄՆ դոլարի 53.3%-ը Ռուսաստանի Դաշնության կողմից տրամադրված վարկերի գծով մասհանումներն են:

2018 թվականի ընթացքում ՀՀ ԿԲ-ին տրամադրված արտաքին վարկերի գծով ստացումները կազմում են Գերմանիայի Վերականգնման վարկերի բանկի (KFW) կողմից տրամադրված մասհանումները՝ 24.6 մլն ԱՄՆ դոլար:

2018 թվականի տարեվերջին ՀՀ արտաքին պետական վարկերի 50.3%-ը արտոնյալ վարկերն են, իսկ 49.7%-ը՝ ոչ արտոնյալ վարկերը: **Վերլուծության արդյունքում պարզվել է 2018 թվականին 2017 թվականի համեմատ արտոնյալ վարկերի կշիռը նվազել է 3.5 տոկոսային կետով:**

ՀՀ կառավարության արտաքին պարտքի սպասարկումը 61.6 մլն ԱՄՆ դոլարով կամ 26.2%-ով ավելացել է 2017թ. համեմատությամբ

2018 թվականին ՀՀ արտաքին պետական պարտքի սպասարկման ծախսը կազմել է 370.9 մլն ԱՄՆ դոլար (166.2 մլն ԱՄՆ դոլար տոկոսավճարներ և 204.7 մլն ԱՄՆ դոլար մարում), որից՝ ՀՀ կառավարության սպասարկման ծախսը (առանց արտաքին երաշխիքների սպասարկման ծախսերի, որոնք կազմել են 0.1 մլն ԱՄՆ դոլար) կազմել է 296.6 մլն ԱՄՆ դոլար (154.8 մլն ԱՄՆ դոլարը տոկոսավճարներ և 141.8 մլն ԱՄՆ դոլարը՝ մարում), իսկ ԿԲ-ինը՝ 74.3 մլն ԱՄՆ դոլար (11.4 մլն ԱՄՆ դոլարը տոկոսավճարներ և 62.9 մլն ԱՄՆ դոլարը՝ մարում):

2018 թվականին ՀՀ կառավարության արտաքին պարտքի գծով փաստացի վճարված 154.8 մլն ԱՄՆ դոլար տոկոսավճարներում 65.8 մլն ԱՄՆ դոլարը կամ 42.5%-ը արտարժութային պետական պարտատոմսերի գծով տոկոսավճարներն են, իսկ 89.0 մլն ԱՄՆ դոլարը կամ 57.5%-ը միջազգային կազմակերպություններից, օտարերկրյա պետություններից և առևտրային բանկերից ՀՀ կառավարության ներգրավված արտաքին վարկերի գծով տոկոսավճարները:

2018 թվականին ՀՀ կառավարության ներգրավված արտաքին վարկերի գծով փաստացի մարումները կազմել են 141.8 մլն ԱՄՆ դոլար, որտեղ 101.7 մլն ԱՄՆ դոլարը կամ 71.7%-ը միջազգային կազմակերպությունների գծով մարումների բաժինն է, որից 47.1 մլն ԱՄՆ դոլարը կամ 46.3%-ը միայն Զարգացման միջազգային ընկերակցության (IDA) մարմանն ուղղված գումարներն են:

2019 թվականին ՀՀ արտաքին պարտքը մարելու և տոկոսավճարները իրականացնելու համար անհրաժեշտ կլինի 414.9 մլն ԱՄՆ դոլար, կամ 11.9%-ով ավելի, քան 2018 թվականին: 2017 թվականից սկսած սպասարկման ծախսը աստիճանաբար ավելանում է և գագաթնակետին կհասնի 2020 թվականին՝ կազմելով 973.5 մլն ԱՄՆ դոլար[1]:

1.4.3. ՀՀ արտաքին պետական պարտքի բեռը բնութագրող մակրոտնտեսական ցուցանիշները

2018 թվականի ՀՀ արտաքին պարտքի բեռը բնութագրող մակրոտնտեսական ցուցանիշների վերլուծությունից պարզվել է, որ Արտաքին պարտք/ՀՆԱ հարաբերակցությունը 44.5% է, այսինքն՝ այս ցուցանիշով չի գերազանցել 50%-ի

[1] Եզրակացության պատրաստման դրությամբ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից դեռևս չէին ավարտվել 2019-2021թթ. ՄԺԾԾ կազմման աշխատանքները, այդ պատճառով օգտագործվել են 2016 թվականին արված կանխատեսումները:

սահմանը: Բոլոր հինգ ցուցանիշներով Հայաստանի Հանրապետությունը բնու–թագրվում է որպես նվազ պարտքի բեռ ունեցող երկիր: (Աղյուսակ 1):

Աղյուսակ 1

Հայաստանի Հանրապետության արտաքին պետական պարտքի բեռը բնութագրող մակրոտնտեսական ցուցանիշները

Ցուցանիշի անվանումը	Ցուցանիշների սահմանները՝ ըստ դասակարգման խմբերի	Փաստացի ցուցանիշներ		
		2016	2017	2018
Արտաքին պետական պարտքի **ՀՆԱ/ՀՆԱ**	Առավել ծանր պարտքի բեռ ունեցող երկրներ >80%			
	Միջին պարտքի բեռ ունեցող երկրներ 48%-80%			
	Նվազ պարտքի բեռ ունեցող երկրներ < 48%	38.0%	41.0%	39.5%
Արտաքին պետական պարտքի **ՀՆԱ/ Արտահանում**	Առավել ծանր պարտքի բեռ ունեցող երկրներ >220%			
	Միջին պարտքի բեռ ունեցող երկրներ 132%-220%			
	Նվազ պարտքի բեռ ունեցող երկրներ <132%	114.3%	109.6%	105.3%
Արտաքին պետական պարտքի սպասարկում /Արտահանում	Առավել ծանր պարտքի բեռ ունեցող երկրներ >30%			
	Միջին պարտքի բեռ ունեցող երկրներ 18%-30%			
	Նվազ պարտքի բեռ ունեցող երկրներ <18%	6.6%	6.7%	7.9%
Արտաքին պետական պարտքի **տոկոսավճար /Արտահանում**	Առավել ծանր պարտքի բեռ ունեցող երկրներ > 20%			
	Միջին պարտքի բեռ ունեցող երկրներ 12%-20%			
	Նվազ պարտքի բեռ ունեցող երկրներ <12%	3.6%	3.3%	3.6%
Արտաքին պետական պարտք/Արտահանում	Առավել ծանր պարտքի բեռ ունեցող երկրներ >275%			
	Միջին պարտքի բեռ ունեցող երկրներ 165%-275%			
	Նվազ պարտքի բեռ ունեցող երկրներ <165%	137.3%	127.6%	118.5%
Արտաքին պետական պարտք/ՀՆԱ	Սահման՝ 50.00%	45.6%	47.7%	44.5%
ՀՀ արտաքին պետական պարտքի սպասարկում /Պետբյուջեի եկամուտներ	Սահման՝ 22.5%	9.4%	11.3%	13.4%

2. ՀՀ 2018 թվականի պետական բյուջեի կատարմանն առնչվող օրենսդրության վերաբերյալ

! **ՀՀ պետական բյուջեի մասին օրենքում, ինչպես նաև պետական բյուջեի կատարման տարեկան Հաշվետվություններում բացակայում են ըստ եկամտատեսակների հարկային եկամուտների պլանի և ճշտված պլանի ցուցանիշները:**

Արդյունքում, ըստ եկամտատեսակների եկամուտների փաստացի ցուցանիշների նկատմամբ ուսումնասիրությունները լիարժեք չեն իրականացվում:

! **ՀՈԱԿ-ների, հիմնադրամների և բաժնետիրական ընկերությունների հաշիվները դեռևս գտնվում են առևտրային բանկերում:**

ՀՀ բյուջետային միջոցների կառավարման արդյունավետության նպատակով անհրաժեշտ է, որ «Գանձապետական համակարգի մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 2-րդ կետին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետությանը և համայնքներին ամրագրված բոլոր բյուջետային միջոցները հաշվեգրվեն, շրջանառվեն գանձապետական միասնական հաշվով: Մասնավորապես՝ ՀՈԱԿ-ներին, ԲԸ-ին, Հիմնադրամներին, ինչպես նաև «Գերմանահայկական հիմնադրամ» ծրագրի կառավարման գրասենյակ պետական հիմնարկին տրամադրված բոլոր բյուջետային միջոցները շրջանառվեն գանձապետական միասնական հաշվով:

! **2014 թվականից մինչև այժմ ՀՀ պետական բյուջեի կատարողականի հաշվետվություններում՝ ներքին տոկոսավճարներ հոդվածում, ներառված չեն ռեզիդենտների կողմից ձեռք բերված արտարժութային պետական պարտատոմսերի համար վճարված տոկոսավճարները:**

Համաձայն «ՀՀ պետական պարտքի մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասի, ներքին պետական պարտքի աղբյուրներ են հանդիսանում՝ 1) ռեզիդենտների կողմից ձեռք բերված պետական գանձապետական և արտարժույթով թողարկված պարտատոմսերը, 2) ռեզիդենտ ֆիզիկական և իրավաբանական անձանց կողմից կառավարությանը տրամադրված փոխառությունները և վարկերը, 3) ներքին պետական երաշխիքները: Համաձայն ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի

նախարարի 09.01.2007թ. թիվ 5 հրամանի, ներքին տոկոսավճարները բոլոր այն տոկոսավճարներն են, որոնք վճարվել են կամ հաշվեգրվել են ներքին աղբյուրներին: Այսպիսով, ռեզիդենտների կողմից ձեռք բերված արտարժութային պետական պարտատոմսերը համարվում են ներքին պարտքի ֆինանսավորման աղբյուր և վերջիններիս սպասարկման համար վճարվող տոկոսավճարները պետք է հաշվառվեն որպես ներքին տոկոսավճարներ: Ուսումնասիրություններից պարզվել է, որ 2014 թվականից մինչև այժմ ՀՀ պետական բյուջեի կատարողականի հաշվետվություններում՝ ներքին տոկոսավճարներ հոդվածում, ներառված չեն ռեզիդենտների կողմից ձեռք բերված արտարժութային պետական պարտատոմսերի համար վճարված տոկոսավճարները: 2018 թվականին արտարժութային պետական պարտատոմսերի սպասարկման համար վճարված տոկոսավճարը կազմել է 31.8 մլրդ ՀՀ դրամ:

3. 2018 թվականի ՀՀ պետական բյուջեով սահմանված ծրագրերի իրականացումը բնութագրող ոչ ֆինանսական ցուցանիշների կատարման վերաբերյալ

Հայաստանի Հանրապետության 2018 թվականի պետական բյուջեի կատարման վերաբերյալ հաշվետվությունում ներկայացված են եղել 3085 ոչ ֆինանսական ցուցանիշներ՝ 1240 քաղաքականության միջոցառումների[2] շրջանակներում /2017 թվականին՝ 3642 ոչ ֆինանսական ցուցանիշներ՝ 1316 քաղաքականության միջոցառումների շրջանակներում /:

Քաղաքականության միջոցառումներն, ըստ տեսակների, ունեցել են հետևյալ բաշխվածությունը.

	2018		2017	
Տեսակ	Քանակ	Տես. կշիռ	Քանակ	Տես. կշիռ
ԱԾ	711	57.3%	706	53.6%
ԾՏ	346	27.9%	367	27.9%
ԿՀ	85	6.9%	88	6.7%
ՎՏ	7	0.6%	9	0.7%
ԵԿ	27	2.2%	47	3.6%
ԵՊ	17	1.4%	23	1.7%
ԱՁ	19	1.5%	60	4.6%
ԿՊ	8	0.6%	8	0.6%
ՖԾ	4	0.3%	4	0.3%
ԱՏ	16	1.3%	4	0.3%
Ընդամենը	**1240**	**100.0%**	**1316**	**100%**

Ծանոթագրություն: ԱԾ՝ *ծառայություններ,* ***ԾՏ***՝ *տրանսֆերտներ,* ***ԿՀ***՝ *պետական կառավարչական հիմնարկի կողմից ուղղակիորեն օգտագործվող և այդ հիմնարկի հաշվեկշռում հաշվառվող ոչ ֆինանսական ակտիվների ձեռքբերում, կառուցում կամ հիմնանորոգում,* ***ՎՏ***՝ *վարկերի տրամադրում,* ***ԵԿ***՝ *պետական բյուջեի միջոցների հաշվին տվյալ պետական կառավարչական հիմնարկի ընդհանուր կառավարման լիազորության ներքո գտնվող պետական կառավարչական հիմնարկ չհանդիսացող պետական մասնակցությամբ կազմակերպության համար ոչ ֆինանսական ակտիվների ձեռքբերում, կառուցում և հիմնանորոգում,* ***ԵՊ***՝ *այլ կառավարչական հիմնարկի ընդհանուր կառավարման լիազորության ներքո գտնվող կազմակերպությունների համար պետական բյուջեի միջոցների հաշվին, տվյալ կազմակերպության հաշվեկշռում հաշվառվող*

[2] Պետության միջամտությունն է, որը կարող է հանդես գալ պետական մարմինների, պետական կամ այլ կազմակերպությունների կողմից ծառայությունների մատուցման, աշխատանքների կատարման, ապրանքների կամ տրանսֆերտների տրամադրման, կապիտալ (ոչ ֆինանսական) և ֆինանսական ակտիվների ստեղծման (ձեռք բերման) կամ օտարման, ինչպես նաև օրենքով սահմանված այլ ձևերով («Բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենք, հոդված 1. 2, մաս 18):

*ոչ ֆինանսական ակտիվների ձեռքբերում, կառուցում և հիմնանորոգում (ներդրումներ), **ԱՁ**՝ հանրության կողմից օգտագործվող ոչ ֆինանսական ակտիվների գծով պետական բյուջեից կատարվող ծախսեր, **ԿՊ**՝ այլ կառավարչական հիմնարկների կողմից ուղղակիորեն օգտագործվող և վերջիններիս հաշվեկշռում հաշվառվող ոչ ֆինանսական ակտիվների ձեռքբերման, կառուցման և հիմնանորոգման գծով ծախսեր, **ՖԾ**՝ ֆինանսավորման ծախսեր, **ԱՏ**՝ պետական կառավարչական հիմնարկի հաշվեկշռում հաշվառվող և պետական կառավարչական հիմնարկ չհանդիսացող կազմակերպությունների կողմից օգտագործվող ոչ ֆինանսական ակտիվների ձեռքբերում, կառուցում կամ հիմնանորոգում:*

Ոչ ֆինանսական ցուցանիշներն, ըստ տեսակների, ունեցել են հետևյալ բաշխվածությունը.

Տեսակ	Քանակ	Տես. կշիռ
Քանակական	2465	79.9%
Որակական	289	9.4%
Ժամկետայնության	278	9.0%
Ակտիվի ծառայության կանխատեսվող ժամկետը	6	0.2%
Ակտիվի ընդհանուր արժեք	4	0.1%
Տրանսֆերտի վճարման հաճախականությունը	43	1.4%
Ընդամենը	**3085**	**100.0%**

231 քաղաքականության միջոցառման գծով (ընդհանուրի 18.6%-ը) որևէ ոչ ֆինանսական ցուցանիշ սահմանված չի եղել:

Չափելիության հնարավորության բացակայությունը անհնար է դարձնում նշված միջոցառումների կատարման արդյունավետության գնահատումը:

Ընդ որում, ՀՀ 2017 թվականի պետական բյուջեի կատարման վերաբերյալ եզրակացությունում ՀՀ հաշվեքննիչ պալատն առաջարկել էր սահմանել ոչ ֆինանսական ցուցանիշներ այն քաղաքականության միջոցառումների գծով, որոնց համար այդպիսիք դեռևս սահմանված չեն: Նախորդ տարվա համեմատությամբ ոչ միայն նշված առաջարկությունը չի կատարվել, դեռ ավելին՝ որևէ ոչ ֆինանսական ցուցանիշ չպարունակող քաղաքականության միջոցառումների թիվն աճել է 1.2 տոկոսային կետով:

803 քաղաքականության միջոցառման գծով (ընդհանուրի 64.8%-ը) սահմանված է եղել միայն մեկ տեսակի (հիմնականում՝ քանակական) ոչ ֆինանսական ցուցանիշ, ինչը բավարար չէ քաղաքականության միջոցառումների արդյունքների լիարժեք գնահատման, հետևաբար նաև՝ դրանց կատարման արդյունավետության լիարժեք գնահատման համար:

Միայն 112 քաղաքականության միջոցառման գծով (ընդհանուրի 9%-ը) է սահմանված եղել ոչ ֆինանսական ցուցանիշների տեսակային լիարժեք կազմ:

Ընդ որում, ՀՀ 2017 թվականի պետական բյուջեի կատարման վերաբերյալ եզրակացությունում ՀՀ հաշվեքննիչ պալատն առաջարկել էր սահմանել ոչ ֆինանսական ցուցանիշների տեսակային առավել լիարժեք կազմ՝ մեծացնելով ոչ քանակական տեսակի ոչ ֆինանսական ցուցանիշների ծածկույթը՝ հատկապես շեշտադրելով որակական տեսակի ոչ ֆինանսական ցուցանիշների ծածկույթի ընդլայնումը: Նախորդ տարվա համեմատությամբ ոչ միայն նշված առաջարկությունը չի կատարվել, դեռ ավելին՝ միայն մեկ տեսակի (հիմնականում՝ քանակական) ոչ ֆինանսական ցուցանիշ պարունակող քաղաքականության միջոցառումների թիվն աճել է 5.5 տոկոսային կետով, ոչ ֆինանսական ցուցանիշների տեսակային լիարժեք կազմ պարունակող քաղաքականության միջոցառումների թիվը նվազել է 4.2 տոկոսային կետով, իսկ առավել արժեքավոր՝ որակական տեսակի ոչ ֆինանսական ցուցանիշների թիվը պակասել է 109 հատով:

«Ժամկետայնություն» տեսակի ոչ ֆինանսական ցուցանիշների դեպքում հիմնականում բացակայում են փաստացի ցուցանիշները, ինչն անհնար է դարձնում տվյալ ցուցանիշների կատարման գործընթացին հետևելը:

Ոչ ֆինանսական ցուցանիշների պլանավորված և փաստացի մեծությունների շեղումների վերաբերյալ բացատրությունները, ինչպես և նախորդ տարի, հիմնականում, կա՛մ բացակայում են, կա՛մ ներկայացված են այնպես, որ չեն տալիս շեղման պատճառների վերաբերյալ լիարժեք պատկերացում:

4. Հետհսկողական գործընթաց (Follow up)

2017 թվականի պետական բյուջեի կատարման վերաբերյալ ՀՀ հաշվեքննիչ պալատի եզրակացությամբ ներկայացվել են եզրահանգումներ և դրանցով պայմանավորված առաջարկություններ, որոնցից մի քանիսի մասով ՀՀ կառավարության կողմից տրվել են լուծումներ, մասնավորապես՝

1. Առաջարկվել է ՀՀ պետական բյուջեի մասին օրենքի նախագծում ներառել արտաբյուջետային մուտքերն ու ելքերը, որի մասով արդեն 2018թ.-ին ձեռնարկվել են միջոցառումներ և արտաբյուջետային միջոցները ներառվել են «Հայաստանի Հանրապետության 2019 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքում:
2. Առաջարկվել է ձեռնարկել միջոցառումներ «Գանձապետական համակարգի մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված պահանջի ապահովման համար 5-րդ մասի դ), զ) և է) կետերով սահմանված մարմինների հաշիվներն առևտրային բանկերից գանձապետական միասնական հաշիվ տեղափոխելու մասով: Ներկա դրությամբ խնդիրը լուծված է մասնակի, մասնավորապես՝ ՊՈԱԿ-ների հաշիվները տեղափոխվել են գանձապետարան, իսկ ՀՈԱԿ-ների, հիմնադրամների և բաժնետիրական ընկերությունների հաշիվները՝ ոչ:
3. Առաջարկվել է սահմանել՝ ոչ ֆինանսական ցուցանիշներ այն քաղաքականության միջոցառումների գծով, որոնց համար այդպիսիք դեռևս սահմանված չեն, ոչ ֆինանսական ցուցանիշների տեսակային առավել լիարժեք կազմ, և բարձրացնել ոչ ֆինանսական ցուցանիշների պլանավորման և կատարման գործընթացի նկատմամբ հետևողականությունը: 2019 թվականից սկսած տեղի է ունեցել անցում ծրագրային բյուջետավորման, սակայն 2019 թվականի պետական բյուջեի ոչ ֆինանսական ցուցանիշների գծով արձանագրված առաջընթացի վերաբերյալ տեղեկատվություն ՀՀ հաշվեքննիչ պալատը կտրամադրի հաջորդ տարվա իր՝ ՀՀ պետական բյուջեի կատարման մասին եզրակացությամբ:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. ՀՀ պետական բյուջեի կատարման մասին տարեկան հաշվետվության տեքստում ավելացնել վերլուծություն պետական բյուջեի գերատեսչական դասակարգմամբ ծախսերի վերաբերյալ:

2. ՀՀ պետական բյուջեի կատարման մասին տարեկան հաշվետվության մեջ ներառել գանձապետական միասնական հաշվի մնացորդների վերաբերյալ տեղեկատվություն:

3. Մշակել մեխանիզմներ ՀՀ պետական բյուջեի կատարման մասին տարեկան հաշվետվության կամ Հաշվեքննիչ պալատին ներկայացվող ՀՀ պետական բյուջեի կատարողականի փաթեթի մեջ ՀՀ պետական բյուջեի մասին ՀՀ օրենքի 6-րդ հավելվածի՝ ՀՀ կենտրոնական բանկի 2018 թվականի վարչական ծախսերի կատարման վերաբերյալ տեղեկատվությունը ներառելու ուղղությամբ:

4. ՀՀ պետական բյուջեի մասին օրենքում, ինչպես նաև պետական բյուջեի կատարման մասին տարեկան հաշվետվություններում ներառել ըստ եկամտատեսակների հարկային եկամուտների պլանի և ճշտված պլանի ցուցանիշները:

5. Ձեռնարկել «Գանձապետական համակարգի մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված պահանջի կատարմանն ուղղված միջոցառումներ, մասնավորապես ՀՈԱԿ-ների, ԲԸ-ների և հիմնադրամների հաշիվները առևտրային բանկերից տեղափոխել Գանձապետարան:

6. «ՀՀ պետական պարտքի մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի համաձայն, ռեզիդենտների կողմից ձեռքբերված արտարժութային պետական պարտատոմսերի սպասարկման ծախսերը ներառել ներքին պետական պարտքի սպասարկման փաստացի ծախսում:

«Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ պետական բյուջեի կատարման վերաբերյալ եզրակացությունը կազմվում է՝ օգտագործելով նույն տարվա պետական բյուջեի երեք, վեց և ինն ամիսների կատարման նկատմամբ ֆինանսական և համապատասխանության հաշվեքննությունների ընթացիկ եզրակացությունները, իսկ 43-րդ հոդվածի 6-րդ մասը սահմանում է, որ վերոնշյալ դրույթն ուժի մեջ է մտնում 2020 թվականի հունվարի 1-ից: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ դեռևս լիարժեքորեն լուծված չէ Օրենքի 32-րդ հոդվածով սահմանված՝ ՀՀ հաշվեքննիչ պալատին էլեկտրոնային շտեմարանների առցանց հասանելիության ապահովման խնդիրը (որին Հաշվեքննիչ պալատն անդրադարձել էր «ՀՀ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների և հիմնարկների կողմից հաշվեքննության իրականացման համար անհրաժեշտ տեղեկատվության մատչելիությունը ապահովող գործընթացի վերաբերյալ» իր ընթացիկ եզրակացությունում), ինչպես նաև այն ակնկալիքով, որ առաջիկա տարիներին պետական մարմինների խոշոր տվյալների բազաները լիարժեք կինտեգրվեն «ԷԿԵՆԳ» ՓԲԸ-ի փոխգործելիության հարթակին, առաջարկում ենք ՀՀ Ազգային ժողովին և ՀՀ կառավարությանը Օրենքի վերոնշյալ դրույթի ուժի մեջ մտնելու ժամկետ սահմանել 2022 թվականի հունվարի 1-ը:

7

Վերանայել ներքին աուդիտի միասնական կառավարման տեղեկատվական համակարգի շահագործման պահանջի դադարեցումը և գործուն քայլեր ձեռնարկել տեղեկատվական համակարգը կայացնելու և ներդնելու գործում:

8

ՄԱՍ 2. ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԿԱՐԾԻՔ

Հաշվի առնելով եզրակացությամբ ներկայացված նկատառումներն ու փաստերը, ՀՀ հաշվեքննիչ պալատը գտնում է, որ ՀՀ կառավարության կողմից ՀՀ Ազգային ժողով ներկայացված՝ «ՀՀ 2018 թվականի պետական բյուջեի կատարման վերաբերյալ» տարեկան հաշվետվությունում եկամուտներին, ծախսերին և դեֆիցիտին ամրագրված ցուցանիշները համապատասխանում են «ՀՀ 2018 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքով սահմանված դրույթներին և արտացոլում են պետական բյուջեի փաստացի կատարողականը: Ըստ այդմ, ՀՀ հաշվեքննիչ պալատը պետական բյուջեի կատարման վերաբերյալ տրամադրել է դրական եզրահանգում: